



ԲԱԳՐԱՏ ՈՒՂՈՒԲԱԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՂՎԱՆԻՑ ԹԵՎԻ ՍԿՃԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ*

Թագավորն իր գերդաստանով ընդառաջ է գնում սրբազն թափորին: Երկրի աշխարհիկ տերերն ու հոգևոր նոր վեհապետը ցնծության պահեր են ապրում, կատարում անհրաժեշտ պահք ու աղոթքներ: «Եսկ ի լուլ կիտին եղելոյ պահոցն կատարելոյ, առեալ երանելոյն Գրիգորի զաշխարհաբանկ զօրացն, և զինքնին զթագաւորն, և զկին նորա Սշիւն, և զմեծ օրիորդն Խոսրովիդաս, և մեծամեծն ամենայն, և ամենայն մարդկաւ բանակին հանդերձ՝ ընդ այն ի լուսանալ առաօսուն յափն Եփրատ գետոյն մատուցանէր. և անդն մկրտէր առ հասարակ զամենեսեան...»²⁴:

Ուրեմն Ուտիքի, Արցախի, Սյունիքի ու Գուգարքի տերերն էլ, երկրի մյուս իշխանների, նախարարների ու կուսականների մետ միասին, Գրիգոր Լուսավորչից են մկրտություն ստոցել Եփրատ գետում:

Այսքանից հետո է արդեն, որ «շինելով եկեղեցին յամենայն աշխարհն, ի գաւառն, ի կողմանն, ի քաղաքն, յաւանն, ի շենս, ի գեօնս և յագարակն: Սոյնական և թագաւորն յամենայն իշխանութեան իրում առ հասարակ՝ գրեաց չորս չորս հոդս երդոյ յամենայն ագարակ տեղին, իսկ յաւանն եօթն եօթն հոդս երդոյ՝ ի ծառայութին ապաստրութեան քահանայութեանն, նույր պտղոյ տեանն մատուցանէր»²⁵:

* Ծարումակված «Եջմիածին» ամսագիր 1978 թվականի № Դ-ից:

²⁴ Անդ, էջ 420:

²⁵ Անդ, էջ 423:

Պատմիչը կարևոր տեղեկություն է հայորդում նաև երկրում ծավալված մտավորութավորական գործի հանգամանքների մասին: Տրդատ թագավորը հրաման է տալիս՝ իր տերության բոլոր կողմերում, բոլոր համանգներում ու գավառներում «քազմութիւն մատաղ մանկուոյ ածել յարուեան դպրութեան, և կարգել ի վերայ հաւատարիմ վարդապետու: առաւել զազգս պղծագործ քրմացն և մանկուուն նոցա ի նոյն ժողովել գումարել յարժանաւոր տեղին դաս, և դարման ոռնկաց կարգել: Եւ զնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յԱսորի դպրութեան կարգեալ, և զոմանս ի Հելլէն»²⁶:

Հաստատվում են նաև հոգևոր թեմերը՝ թվով չորս հարյուր: Նրանցում եպիսկոպոսներ են Եղանակվուս այն հոգևորականներից, որոնք եկել են հավատի նոր թափորի հետ: Գրիգոր Լուսավորչից ձեռնադրված առաջին երեսուն եպիսկոպոսների շարքում հիշվում է նաև «քսաներորդն՝ Գարդմանաց», այսինքն՝ Ուտիքի («Այս երեսուն եպիսկոպոսը, որը արոռակալութեամբ ընկալաւ ձեռնադրութիւն ի սրբոյն Գրիգորէ, և այլ ևս երեք հարյուր և եւթանասուն եպիսկոպոսը, որ և նորա կարգեան ի տեղին տեղին տեսուչը և առաջնորդը յիրաքանչիր գաւառու...»)²⁷:

Նոր կրոնի տարածումը վիթխարի թափ ու ծավալ էր ընդունել: Ուշադիր քննելով

²⁶ Անդ, էջ 424:

²⁷ Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վ.-պատ, 1871, թ. առաջին, էջ 100:

աղբյուրի տեղեկությունն այդ ծավալի, ընդգրկումի սահմանների մասին, տեսնում ենք, որ հավատանպատ արշավամբի սահմանների մեջ էին առնված ոչ միայն Հայաստան Երկրի 15 նահանգները, այլև բազմաթիվ գավառներ հարևան երկրներից:

Եփրառում մկրտված աշխարհիկ իշխանավորներն ու հոգևորականներն իրենք արդեն դարձել էին նոր հավատի քարոզիչներ ու առաջամարտիկներ: Պարզ է, որ նախարարներն իրենց նահանգներն էին վերադարձել՝ լիսակրու ու եռանդուն կատարելու թագավորի ու հայրապետի պատվիրանները: Նրանք իրենց հոգևոր պարտականությունն էին համարում հարևան երկրներում և քարոզական գործ կատարելու: Այս է պատճառը, որ նոր հավատի տարածումը քննության ենթակա մարզերի սահմաններում հասել էր «մինչ ի սպառ ի սահման» Մարքաց, մինչև ի դրուն Ալանաց, մինչ ի սահման Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց»²⁸:

Քրիստոնեական կրոնը Հայաստանում հիմնավորապես տարածելու և արմատավորելու գործի հետագա շրջանի հանգամանքներն իրենց արտացոլումն են գտնել Ե. Դ. Մեր պատմիշների, հատկապես Կորյունի, Բյուզանդի ու Խորենացու երկերում:

Զգեստը է մոռանալ, որ այս պատմիշները հիշյալ իրողություններց հետո էին ավելի քան մեկ հարյուրամյակով և իրենց տեղեկությունները պետք է քաղեին կա՞մ օտարալեզու աղբյուրներից, կա՞մ բուն երկրում տարածված ավանդություններից: Ըստ այս արդեն պատմիշի գիտական ու քննական կարողություններից՝ պիտի կախված լիներ, թե նա ինչպես է այդ երկու՝ ոչ այնքան պարզ աղբյուրներից քաղած նյութերի հիման վրա վերականգնում պատմական իրականության ճշմարիտ պատկերը: Եվ քանի որ մեր երեք պատմիշների երկերում էլ նույն դեմքերին ու դեպքերին վերաբերող տվյալները միշտ չեն, որ մինչև վերջ համաձայն են իրար հետ, ապա այսօրվա պատմաբանի խսդիրն է՝ գերագույն զգուշավորությամբ, ժամանակի շարժիչ ուժերի և իրողությունների համակարգման վերլուծության միջոցով գտնել ճշմարտության բեկորները, դրանք կապակցել իրար և ստեղծել այն տրամաբանական պատկերը, որ գոյություն է ունեցել պատմական հեռավոր ժամանակում:

Մեր պատմիշները միահամուն են այն հարցում, որ հայոց նոր կրոնի առաջին գործիների ամենաառաջին մտահոգություններից մեկն է եղել երկրի ծայրագա-

վառների, առանձնապես հյուսիսային ու արևելյան սահմաններին մոտ եղած երկրաբանակը²⁹: Այս կողմերում Հայաստանին սահմանակից էին հյուսիսային ցեղերը և զրադաշտական Պարսկաստանը, որոնցից հավատի ամոր պատճեղով անըրապետվելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին նոր հավատը խոր արմատավորել սահմանամերձ նահանգներում և հնարավորության դեպքում այն տարածել հարևան երկրների սահմանակից գավառներում: Այս մտահոգությունը գալիս էր դեռևս Լուսավորչի ժամանակից: Նա իր գործունեության հետո առաջին շրջանու այցելել է Արցախ-Ուտիքյան հայաշխարհը, տեղում կարգավորել նոր հավատի տարածման ու ամրապնդման գործը: Արցախի Ամարան ավանում Գրիգոր Լուսավորիչն անձամբ հիմնել է եկեղեցի, որի կառուցման ավարտումը պիտի լիներ նրա թոռան ձեռքով³⁰:

Ժողովրդական հիշողությունը Գրիգոր Լուսավորչի անվան հետ շատ բան է կապում Արցախում: Դրանցից մեկն է Ամարասից արևմտաք քարձացող (այժմյան Մարտունու շրջանի) Սոս գյուղի թիկունքում, դեպի արևելքը) Լուսավորչի սարր: Ըստ այլականության, Արցախի հոգևոր գործերը կարգավորելիս Գրիգոր Լուսավորիչն ամեն առավելագույն այս սարի գագաթին է ցայգապատշուն կատարել՝ ընդունելով իր երկրի ծայր արևելքում ծնվող առավոտը³¹:

Հայաստան երկրի ծայրամասերում հավատի ամոր ու հաստատ հիմքերի վրա պահելու հոգած չմարեց նաև Լուսավորչի մահից հետո: Այս ժամանակներում ևս Պարսկաստանին ու հատկապես կովկասյան ցեղերին մոտ գտնվող նահանգներում պետք է գործեին երկրի ամենահեղինակավոր ու ամենառանդուն հոգեւոր գործիները: Եվ բոլորին էլ պատահական չէ, որ երբ խոր է լինում նոր նահանգենությունների մասին, Հայոց թագավորին են ներկայանում «գործակալք կողմանցն արևելից հիւսիսոյ» և ասում. «Եթէ կամիցիս ողղութեամբ վարել կողմանցն այնոցիկ լսու այս հաւատոյ՝ առաքեան նոցա եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի, զի լոժք փափագելով խընդ-

²⁸ Խորենացի, էջ 259. «Մեծաւ պնդութեամբ սաներ վրէժինդրութիւն հաստոց և վարուց երանելին արդար, առաւել այնոցիկ, որ բացեաց կողմանցն էին իրուն իշխանութեան»:

²⁹ Փատոս Բիգանդ, էջ 28: Կաղանկատուացի, էջ 45:

³⁰ Մ. Բարխուտարյան, Արցախ, էջ 115: Մակար վարդապետ ապստեղ հրապարակել է նոյն թեմայով հայտնի ալանդություններից մեկը:

թեն և գիտեմք հասասի, թէ ի հոչակեալ անուանէն Գրիգորի՝ ակնածեսցեն և ի նորին զատակէ, առնել զամենայն ըստ հրամանի»³²:

Տրդատն ընդառաջում է հյուսիս-արևելցիների խնդրանքին և Սրբակի եպիսկոպոս է ողջարկում Գրիգոր Լուսավորչի թոռանը (Վրիտանի կաթողիկոսի երկրորջակ որդիներից մեկին)՝ պատահի Գրիգորիսին:

Մեր պատմիչները նոր եպիսկոպոս ձեռնադրված Գրիգորիսին կոչուն են մանուկ, իսկ Փալստուր Եղում է նաև նրա տարիքը՝ «հնգետասահմանեա»։ Մադ. արքեպո. Օրմանյանը, ուշադրություն դարձելով այս հանգամանքի վրա, պարզել է, որ «տասընինգամյա»-ն չափազանցություն է, քանի որ Գրիգորիսը ծնվել է Կեսարիայում 295-ին և եպիսկոպոս է ձեռնադրվել 320-ի շորջը, որինմ՝ մոտավորապես 25 տարեկան հասակում³³։

Խորենացու և Փալստուի երկերում Գրիգորիսի գործունեության ու համատակությանը վերաբերող տեղեկությունների մեջ չկա սպասված ներդաշնակությունը։ Այդ պատճառով էլ անհրաժեշտ ենք համարում այդ տեղեկություններն ըստ հնարավորին քննել, որպեսզի պարզենք ճշմարտությունը։

Բանն այն է, որ մեր երկու պատմիչներն էլ իրողություններից մեկ ու կես հարյուրամյակ թևող գրի են առել, հավանորեն, հիմնականում ավանդաբար պահպանված տեղեկությունները՝ իրար թևող անհրաժի տարրերակներով։ Իսկ նրանց գրի առածներն էլ թեսագայում ենթարկվել են խմբագրությունների, որոնց թեսքերը պարզ երևում են և չեն կարող չխարթարել պատմական իրավանության ճշմարիտ պատկերը։

Խորենացին, օրինակ, պատմում է, որ Հայաստանի հյուսիս-արևելքում եպիսկոպոս ձեռնադրված Գրիգորիսին առաքում են իր պաշտոնավայրը՝ «հանդերձ Սանատորյան ոմամբ յիրմէ ազգէն Սրբակութեաց»։ Գրիգորիսն իր գործն է կատարում եռանդագին՝ փայլուն օրինակ հանդիսա-

³² Խորենացի, էջ 259։ Պատմահայրն ասուն «գործակալը կողմանցն արևելից հիւսիսոյ» բացատրում է իրուն «վերակացուր թեսաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան...»։ Որը կարող է արդյունք լինել թյուրիմացությամ, քանի որ, եթե Փայտակարանի վերակացուները խնդրած լինեին, Գրիգորիսը եպիսկոպոս կնշանակվեր Փայտակարանում։ Մինչդեռ նա եղել է Սրբակի թեմի առաջնորդ։ Ասպա Փայտակարանը գտնվում էր Հայաստանի արևելքում և ոչ թե հյուսիս-արևելքում։

³³ Մ. արքեպո. Օրմանյան, Ազգապատում, Ա, 8 98։

նալով առաքինության և գործարարության։ Իսկ երբ վախճանվում է Տրդատը, «ի դաւելոյ նորին Սանատորկոյ և այլոց ունաց հանապազասուտ արանց Աղուանից՝ սպանեն զերանելին, ընթարենալ ձիովք, բարբարուքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կապրիական կոչեցեալ ծով։ Չոր բարձեալ սարկաւագաց նորին, թերեւով ի Փոքր Սիւնի, թաղեցին յԱմարաս աւանի։ Իսկ Սանատորկոյ թագ կապեալ ինքեան՝ ունի զբանարկ Փայտակարան։ զօրութեամբ օտար ազգաց տիրել զբողորում Հայոց»³⁴։

Այստեղ խառնակ են տեղեկությունները, մահրամասների մեջ բացակայում է տրամաբանական կապը։ Ինչո՞ւ Հայոց Սրբակի համանգում գտնվող Ամարասի եպիսկոպոս ձեռնադրված Գրիգորիսին ողեկցողը Փայտակարանի տեր Սանատորուկն էր։ Փայտակարանի ազգականը լիներ, երբ Դ. Ա. սկիզբն էր դեռևս, և Փայտակարան մարզն է մտնում էր Մեծ Հայքի կազմի մեջ։ Եվ Փայտակարանի տեր այդ Սանատորուկն ինչո՞ւ սպանեց Գրիգորիսին, եթե ինքն էր նրան խնդրել իր երկրի համար։ Սպանությունն ինչո՞ւ կատարվեց Վատնյան դաշտում, Մազքթաց աշխարհում, որը ոչ մի կապ չտնելու Փայտակարան քաղաքի ու համանգի, ինչպես նաև Ամարասի հետ։

Այս դեպքերի առավել իրական նկարագիրը գտնվում է Փալստուի երկում։ Այստեղ Գրիգորիսը եպիսկոպոս էր Ամարասում³⁵։ Իր թեմի տարածքում ավարտեց պապի՝ Լուսավորչի հիմնադրած եկեղեցին, շինեց ու վերակառուցեց այլ վայրերի հոգեվոր շենքերը («մինչև Սարպատականի կողմերի գավառները»), բնակչությունը քրիստոնեական հավատի բերելու գործն էլ հասցեց ավարտին և այս բոլորից հետո միայն քարոզչական գործունեության գնաց Կորիի ձախափնյակը՝ բուն Աղվանք։ Այնտեղ նա քարոզչություն կատարելով հասավ բազմալեզու, տարացեղ երկրի թագավորի Մազքթաց Արշակունի Սանեսանի նասոցը, որ Զող (Քետազափի Դերբենդ) քաղաքն էր։ Գրիգորիսը փորձեց թագավորին, նրա գործակալներին ու զորքին դարձի բերել։ Սկզբում բոլորը հոժարությամբ լսում ու ենթարկում էին նրան։ Սակայն երբ քննեցին քարոզչի ասածները, պարզեցին, որ Աստ-

³⁴ Խորենացի, էջ 259։

³⁵ Փալստուի տեղեկության համաձայն՝ նա եպիսկոպոս էր Ամարասում, բայց և «կաթողիկոս էր կողմանց Վրաց և Աղուանից» (Փալստու Բիգանե, էջ 21)։ Քիչ հետո ցոյց կտրվի, ու ինչպես տեղեկության երկրորդ մասը նետագայում է մուծվել սույն երկի մեջ։

ծուն համելի չեն ավարառությունը, կոտորելը, որիշներին գրկելու ու հափշտակությունները, այն ժամանակ նրանք մտածեցին, որ քարոզիը Հայոց թագավորի կողմից է ուղարկված. քարոզում է, որպեսզի իրենք շհարձակվեն Հայոց գավառների վրա ու չկողոպտեն և հանգիստ թողնեն նրանց: «Եթե մենք շհափշտակենք, եթե չկողոպտենք, եթե որիշների ունեցածը չխենք, ապա ինչո՞վ այսի ապրենք այսրան բազմաթիվ զորքերս»³⁶, — զարմացած ու զայրացած հարցնում են նրանք:

Ահա այս քարոզների մեջ դավադրություն տեսնելով իրենց դեմ, նրանք Սանեսանի հրամանով հահատակում են Գրիգորիսին Չողից հարավ, Վատնան դաշտում: Գրիգորիսի հետ գնացած սարկավագները նրա մարմինը բերում, թաղում են իրենց Արցախ հահանգի Հարանդ գավառի Սմարաս ավանում, «առ եկեղեցեան, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հատուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին»³⁷:

Գրիգորիսին հահատակելուց հետո Մազրիաց թագավոր Արշակունի Սանեսանը «անհնարին հիթեաց զրտմանութին ոխորեան ընդ հրում ազգակցին Խորովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զորս Հոնաց և Փոխաց, Թաւապարաց, Հեճմատակաց, Խմնախաց, Գալաց և Գղուարաց, Գարգարաց, Շքրաց և Ծղրաց և Բաղասանց և Եգերուանացն և ալլոց խառնադանց բազմութեամբ անթի անբնակն վաշկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխու զօրացն բազմաց: Եկան անց ըստ իր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կոր, և եկան տարածեցաւ եկից երկիրն Հայոց աշխարհին»³⁸:

Սյատեղ արտացոլված մանրամասներն առավել քան պարզ են դարձնում պատկերը՝ շտորնելով ոչ մի մույթ կետ: Թվարկված ցեղային միավորները բուն Սովորների կամ հունա-հոռոմեական հեղինակների ճանաչած Ալքանիա երկրի բնակիչներն են: Այս անոները հավատված են առև հայ մոյս հեղինակների և հատկապես հոյսն ու հոտոմեացի պատմիների կողմից: Թյուրիմացություն կարող է համարվել լոկ Հոնաց անվանումը, քանի որ, մեր պատմիչների հասդորդությունների համաձայն, այդ ցեղի թագավորությունը տեղադրվում էր Չողից հյուսիս, և Չողա կապանն էլ սահման էր Հո-

նաց ու Աղվանից միջև³⁹: Սակայն հնարավոր է, որ այս դեպքի շրջանում Սանեսանն իր տիրապետությունը տարածած լիներ նաև հոների վրա, կամ հոները պարզապես դաշնակցած լինեն նրա հետ՝ Հայաստանն ասպատակելու համար: Կարևոր է, սակայն, որ պատմիչը նշում է ցեղային հիշյալ միավորումներն իր մեջ ընդգրկող թագավորության հարավային սահմանը, — «հիր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կոր», — որ սահման էր Հայոց ու Աղվանից միջև: Այդ Աղվանից երկրի տերն էլ Մազրիաց ցեղային միավորի գլխավորն էր՝ թագավոր Սանեսանը, որը սերվում էր Պարթևական կամ Արշակունյաց սոնինց, որպիսի ծագում ուներ նաև հայ Արշակունյաց թագավորական հարաստությունը:

Որեմն Գրիգորիսին իր թեմում, Արցախում ու հարեւան հայկական գավառներում նորաստեղծ հեղեցող գործերը կարգավորելուց հետո Սովորներ էր գնացել քարոզության և այնուղիւ էլ հահատակվեց երկրի թագավոր Սանեսանի հրամանով: Այս պարզ պատմությունից արդեն հասկանալի է դատնում Փայտակարանում Սանեսանի թագ կապելու մասին Խորենացու հաղորդման թյուրիմացությունը, որին հավատացել են մեր մի շարք պատմաբաններ՝ այդ հիմքի վրա էլ տակեծելով ուրիշ վարկածներ, որոնք ալավաղում են պատմական իրականությունը⁴⁰:

Սանեսանի խաժամուժ զորքերը Կորը անցնելով ասպատակում են Հայոց երկիրը, նաև դեպի հարավ-արևելք՝ հասնելով մինչեւ Ստրպատականի Գանձակ մայրաքաղաքը, մետու էլ՝ դեպի արևմուտք, որ հասնում են Ալքանիան հահանգ, կոտորում բնակչությանը, կողովսում ու ավերում... Մինչև որ Մեծ Հայքի զորավար Վաչեն՝ Արտավազդ Մամիկոնյանի որդին, վերադառնում է՝ դեպի Հունաց կողմերը կատարած ճանապարհորդությունից և, հզոր բանակ կազմելով, հարձակվում կողովսիների վրա, կոտորում անխման և ազատագրում հայրենի երկիրը:

Սյատեղ դեպքերն ու դեմքերը գտնվում են մի տրամաբանական, համոզիչ հյուսվածքի մեջ: Պարզ է, թե ի՞նչ պատճառով Գրիգորիսը հահատակվեց, իսկ դրանից առաջ՝ թե որուելի՝ եպիսկոպոսն էր և ո՞ր էր գնացել քարոզության: Ծգրութեցին հահատակության հանգամանքները: Նահատակողների գլխավորը բուն Սովորների Ար-

³⁶ Փատու Բիգանդ, դպր. Գ. գլ. Զ:

³⁷ Անը:

³⁸ Անը, դպր. Գ, գլ. Է:

³⁹ Ագաթանգեղոս, էջ 22: Ղազար Փարպեցի, էջ 66:

⁴⁰ Ա. Երևանան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 88: Կ. Տրեմեր, հշվ. աշխ., էջ 88 և նոգ.:

շակունյաց թագավորական տոհմի ներկայացուցիչն էր՝ Սանեսանը, և ոչ թե Սանատրուկը, ինչպես Խորենացու հաղորդման մեջ է: Հայու երևոյթին Խորենացու պատմության մեջ այս Սանատրուկ անունը մուծվել է՝ ավանդված մի այլ վարքաբանական պատմության հնանողությամբ. հայտնի է, որ Թադեոս առաքյալը համատակվել է Մեծ Հայրի թագավոր Սանատրուկի հրամանով⁴¹:

Մեր պատմիչները թվականներ չեն հցում վերը շարադրված դեպքերի համար: Մ. Օրմանյանը Գրիգորիսի համատակության ու Սանեսանի արշավանքի տարի է համարում 337/8 թվականը՝ առանց, իհարկե, աղբյուր նշելու, եթե Գրիգորիսի արդեն 42 տարեկան պիտի լիներ⁴²:

Հ. Մանանյանը համաձայն չէ այս ժամանակադրությանը և, հետևելով Յ. Մարկվարտին, հավանական է համարում, որ այս դեպքերը կատարված լինեն 335-ին⁴³: Սակայն գիտնականի վկայակողած աղբյուրներում կորական կարծիք հաստատու ոչ մի տեղեկություն չկա: Ըստիակառակը, հրանցից մեկը խոսում է հայագիտության մեջ տարածում գտած հենց առաջին տեսակետի օգտին: Մանանյանը, խոսելով այն մասին, որ Կոստանդիանոս Մեծ կայսեր որդի Կոստանդիոսը հոր մահից (337 թ. մայիսի 22) հետո, ստանալով Արևելքի կուսակալությունը, 338 թ. եկավ Մերձավոր Արևելք, «որ շարունակում էին հարձակումներ գործել Միջագետքի ու Հայաստանի վրա պարսկական զորքերը»⁴⁴: Կոստանդիոսի Արևելք գալու հետ չեն կապված,

⁴¹ «Սոփերը հայկականք», Բ. Ը, էջ 40 և հաջ.: Խորենացի, էջ 157—158: Փատոս Բիգանդ, դար. Գ, գլ. Ա Աբ: Ուշագրավ է, որ Թադեոս առաքյալին վերաբերող ավանդության մի այլ մանրանման ևս տեղ է գտնել Գրիգորիսի համատակությանը վերաբերող պատմության մեջ: Եթե Թադեոս առաքյալի քարոզմերին շնորհիվ քրազումք հասատացին ի Քրիստոս, հրանց հետ նաև թագավորի դրաստ Սամանդաւությունը, և թագավորի հրամանով համատակվեցին՝ Սամանդաւությունը իր հավատակիցների հետ մասին («Սոփերը հայկականք», Ը, էջ 45), ապա Սազքը աշխարհում Գրիգորիսի քարոզմերին հավատացած 3870 մարդկանց մեջ էին նաև Սանեսան թագավորի երեք որդիները՝ Մովսեսը, Դամիելը, Եղիշան: Սանեսանի հրամանով բրորին էլ կոտորեցին Դիզափաւու լեռան վրա, Կատար վանքում (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Բ էջ 187: Կաղանկատուացի, էջ 184):

⁴² Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, § 99:

⁴³ Հ. Մանանյան, Քննական տեսություն, Բ. Բ, մասն Ա, էջ 144 և հաջ.:

⁴⁴ Անդ, էջ 146—147:

արդյոք, Վաշէ Մամիկոնյան զորավարի Հովիաց կողմերում գտնվելու և, այսուղե հզորացած, հայրենիք վերադառնալու համականքները:

Սանեսանի (և ոչ թե Սանատրուկի)⁴⁵ ասպատակիչները Արևելյան Հայաստանում մնացել էին շորջ մեկ տարի: Հայոց զորքերը հրանց սպառ-սպառ կոտորեցին՝ ընդհույս մինչև թագավորին գիտատելը: Իսկ շարդից մազապործ առանձին գիտորներին էլ հայերը հետապնդեցին ու հապածեցին մինչև Բաղասական աշխարհը⁴⁶, որը Կորի անմիջական ձախափնյակն էր ընդգրկում Կասպից ծովի եզերքից սկսած:

Գրիգորիսի գործունեությամբ իր ավարտին հասած չի եղել Հայոց հյուսիս-արևելյան համանգների բնակչության քրիստոնեացման ընթացքը, քանի որ հետագա ժամանակների գրավիր աղբյուրները դեռ երկար խոսում են հեթանոսական հավատի կայուն մնացուկների ու դրանց հիմքի վրա գոյացած զանազան աղանդեների առկայության մասին: Եվ դա միանգամայն բնական է, քանի որ Ուսիիքն ու Արցախը երկրի ծայրամասերից էին, առավել ենթակա՝ միջնաշխարհում իր դիրքերը զիշտ հեթանության հարվածներին ու հարևան Պարսկաստանից եկող մազդեանց կրոնի ազդեցությանը: Սակայն նոյն գրավիր աղբյուրներից հայտնի է, որ նոյնին միջնաշխարհում էլ այդ ժամանակ հեռանց գործերը բարեհաջող ընթացք չունեին: Քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելոց տասնամյակներ հետո էլ հեթանոս ամրության պետք է հարձակվեր կաթողիկե Մայոր տաճարի վրա և փորձեր սպանել կաթողիկությին: Փավստոս Բյուզանդի տեղեկության համաձայն, հեթանոս էր անգամ Փառանձեւ թագուհին Հայոց՝ Դ. Դ. երկրորդ կեսին: Այնպէս որ բոլորովին էլ զարմանալի չէ, եթե, աղբյուրների հաղորդմամբ, Մեսրոպ Մաշտոցը Ե. Դ. Ակզին ոչ միայն մայրենի գիր ու դպրություն էր արմատավորում երկրի զանազան մասերում, հատկապես Ու-

⁴⁵ Վերը շարադրված դեպքերի մասին Մ. Դասիխուանցին, իր տեղեկությունները քաղելով և՛ Խորենացուց, և Փավստոսից, նկատի չի առել հրանց հակասությունները: Այդ պատճենով էլ հրա երկում Գրիգորիսի սպասող և Հայոց վրա ասպատակող զորքերի գիտավորն ու թագավորը մեկ Սամանդաւությունը ներկայական ժամանակների ու դեպքերի վերաբերյալ անհամատեղի տեղեկությունների ընդունով (Կաղամկատուացի, էջ 87—88, 48), մեկ է՝ Սանեսան (անդ, էջ 49):

⁴⁶ Փատոս Բիգանդ, դար. Գ, գլ. Ե:

տիրում⁴⁷ (Գարդմանքում, որ Ուսիբի գավառն էր), այլև քրիստոնեության հավատն էր տարածում ընտ որում ժրաշան կոիվ մղելով զանազան աղանդների և առհասարակ հեթանոսական հավատալիքների դեմ:

Այդ պայմարն ամենապայն ծավալ ու անհանդորժական բնույթ էր ստացել Վաչագան Բարեպաշտի օրոք, Ե դարի վերջում: Հայոց Սղվանքի տերն ու Սունաշահիկ նորաստեղ թագավորության հեղինակն անձամբ գլխավորում էր այդ պայմարը՝ կանգ չառնելով դաժանությունների առաջ, ընդուու մինչև մահվան պատիժը, եթե նոր հավատի հակառակորդը դիմադրում էր կամ համառում:

Սակայն այս ամենը բոլորովին էլ չի հշանակում, թե հայկական նահանգների քրիստոնյան հայրերը գրալված էին միայն իրենց ներքին գործերով: Սկզբից և եթ նրանք իրենց սրբազն պարտք էին դարձել հարևան ժողովորդներին և նոր հավատին հաղորդակից դարձելու գործը: Եվ նենց նրանց եռանդուն գործունեության շնորհիվ էր, որ քրիստոնեությունը հաջողությամբ տարածվեց բուն Սղվանքում ընդգրկելով երկրի համարյա բոլոր գավառները: Օրինակ, Մաշտոցի այցելությանը, Ե դարի սկզբին, արդեն եպիսկոպոսություններ կային Չողի ու Բաղասականի մարզերում⁴⁸: Ծիշտ է, հետագայի աղբյուրների տեղեկությունների համաձայն, սակայն դարձալ այդ ժամանակների առումով... հավաստված է, որ, Չողի ու Բաղասականի նետ միասին, եպիսկոպոսական թեմեր էին ստեղծվել նաև Կարպալայում (Սղվանքի առաջին մայրաքաղաքը), Լիճիրում և ալլոր:

Հետագայում էլ հայ քարոզիչների ջանքերով էր, որ քրիստոնեական հավատը եղեց Չողա կապաճը և թափանցեց նաև Հյուսիսային Կովկաս: «Սղվանից աշխարհի պատմություն» միանգամայն հավատի աղբյուր է Արցախի Մեծկողմանք գավառի եպիսկոպոսությունը Խորակելի՝ Հոնաց երկրում կատարած քարոզության և այս ուղղությամբ ձեռք բերած հաջողությունների համար: Խո-

րայելը, Ծիշտ է, Հոնաց աշխարհ էր գնացել խաղաղասիրական առաքելությամբ, բայց քարոզությամբ ևս զքաղվեց և ո՛չ ապարդյուն: Քրիստոնեության դարձավ երկրի ամբողջ վերնախավը, սրան էլ հետևեցին հոծ քազմությունները: Բանը հասավ նրան, որ Հոնաց գլխավոր իշխան Ալի-Դիլիթվերը պաղատակից նամակներ գրեց Սղվանից ու Հայոց կաթողիկոսներին՝ խնդրելով Խորակելին թողնելու իրենց մոտ որպես տեսուչ⁴⁹:

Հոնաց աշխարհում հայ քարոզության համանման դեպքեր են արձանագրել նաև օտար աղբյուրները, որոնցից ուշադրության արժանի են հատկապես Զաքարիա Հոնոռորի հաղորդած տեղեկությունները: Խուելով Պարսից արքա Կավաստ Ա-ի ժամանակի դեպքերից, հեղինակը պատմում է, որ Հոնաց աշխարհում ապրում է «Կարդոս անունով մի մարդ, որ Սուան երկրի եպիսկոպոս է»: «Այդ Կարդոսը, որ հունարեն թարգմանած կլիճի՝ Թեովլետոս, իսկ արամեներեն՝ «Աստծոց կոչված», ուրիշ յոթ հոգևորականների հետ միասին քարոզել են գերիներին, շատերին են մկրտել և հոներից [ոմանց] գիր են ստվորեցրել: Նրանք այնտեղ մնացել են յոթ տարի և գրքեր են գրել հոնաց լեզվով»:

«Տասնչորս տարի հետո նա [Կարդոսը] գնացել էր, բայց այնտեղ կար Մակար անունով մի ուրիշ հայ եպիսկոպոս (հշանակում Է Սուանի եպիսկոպոս Կարդոսն էլ է հայ եղել.—Բ. Ու.): Սա լավ պարաստված էր և, հոգևորականների հետ միասին, ալնտեղ էր եկել իր կամքով: Նա աղյուսից եկեղեցի կառուցեց, ծառեր տղնելեց, զանազան բույսերի սերմեր ցանեց, հշանակ կատարեց և շատերին մկրտեց: Երբ այդ երկրի տերերը որևէ նոր բան էին տեսնում, շատ էին զարմանում ու հրճվանքով էին ընդունում [այդ] մարդկանց, հարգում էին նրանց, և յուրաքանչյուրը [ճրանց] հրավիրում էր իր կողմը՝ իր ցեղի մոտ և խնդրում էր, որպեսզի նրանք լինեն իրենց ուսուցիչները: Եվ ահա նրանք մինչև այժմ էլ այնտեղ են»⁵⁰:

Հայ քարոզիչները հարևան ու ոչ հարեւիան երկրներում գրալվում էին ոչ միայն Սատծո պատվիրանների քարոզությամբ: Նրանք, բնականաբար, միշտ էլ քաղաքական ձեռնարկումների մեջ էին նաև: Այդ հասկանում էին նույնակ կիսավայրենի քարոզվողները: Երբ Գրիգորիսը բուն Սղվանքում իր քարոզչական գործն էր կատա-

⁴⁷ Խորենացի, էջ 340, Մաշտոցը «դատան զԳարդմանա» ձորովն զի և ի նմա լուա լինել ի նոցին (Խեթանունների.—Բ. Ու.) ընկրաց աղանդոյն. գորս գուևալ ածէ և զնոսա ի գիտութին ճշմարտութեան, հանդերձ վերատին ուղղութեամբ իշխանին Գարդմանա, որում անոն էր Խորիս:

⁴⁸ Մաշտոցի այս քարոզչական գործունեության մասին մահրամասնությունները տե՛ս Կաղանքաւուացի, գիրը Ա, գլ. Խէ, ԽԸ: Ստ. Օրբելեան, գլ. ԺԶ

⁴⁹ Կաղանքաւուացի, գիրը Բ, գլ. ԼԹ—գլ. ԽԵ:

⁵⁰ Н. Пигуловская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, էջ 166—167:

րում, Սահմանան ու նրա համախռները համակացան, որ նայ հոգևորական իրենց քրիստոնյան է դարձելու, որպեսզի այլև չապատակեն Հայոց երկիրը, չկոտորեն ժողովրդին, չավերեն, կողոպուտ չանեն: Հուսագալում հայ քարոզիչ Խորայելի առաքելությունն է նոյն նպատակն է հետապնդել: Հուներն ու խազարները պարբերաբար ապատակում էին Հայաստանն ու Անդրկովկասը: Խորայելի աջղակ գործունեությունից հետո նոյնինք Հոնաց մեծ իշխանը, նախկին այդ քարբարոսը, արդեն զլիսի էր ընկել ու գրել Հայոց վեհապետին, թե քանի Խորայելլ մեզ հետ է, «արշաւաքը զօրաց խուժադուժ ազգաց յաշխարհի ձեր արգելեալ փակեալ լինիցի՝ մեր մի հաւատ լինելով»⁵¹:

Ի մի բերելով քննության առնված աղբյուրագիտական փաստերն ու տեղեկությունները, կարելի է հաճախ հետևյալ եզրակացությունների:

Աղլանցի կաթողիկոսության հոգևոր ո-

լորի մեջ մտած հայկական Արցախ և Ուտիք համանգներում քրիստոնեությունն էն տարածել Գրիգոր Լուսավորիչը և այդ համագների կուսակալ-հայաստարները, որոնք հայական մկրտությունն էին ստացել Լուսավորչից: Հետագայում այդ համագների ընակչության քրիստոնեացումն ավարտի են հասցերը Գրիգոր Լուսավորչի թոռ և Ամարասի թեսի եպիսկոպոս Գրիգորիսը, Մետրոպ Մաշտոցը, Վաշագան Բարեկասը թագավորը և երկրամասի հայ աշխարհիկ ու հոգևոր ուրիշ առաջնորդներ:

Ինչ վերաբերում է կաթողիկոսության ոլորի մեջ մտած մյուս երկրամասին՝ բան Աղվանքին, որը բռնում էր Կուրի ձախականակը և բնակիված էր աղվանական տարակեզու ցեղախմբերով, ապա պատեղ էր քրիստոնեության տարածման ղեկավարներն էին հայ հոգևոր գործիչները՝ վկած Գրիգորիս եպիսկոպոսից ու նրա հաջորդներից, Մետրոպ Մաշտոցից ու նրա աշակերտներից մինչև հետագա այն քարոզիչները, որոնք իրենց գործունեության շառավիղները հասցին մինչև Հյուսիսային Կովկաս:

51 Կաղանկատուացի, էջ 299:

